



# Mainstreaming Nature in Policy and Investment Decisions

## ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԹԵՐԹԻԿ. ՀԱՅԱՍՏԱՆ

Բնական կապիտալի համաներառում Արարատյան ջրավազանային կառավարման պլանում



### Երկրի համատեքստը

Հայաստանի գյուղատնտեսական արտադրությունը և ձկնարդյունաբերությունը հիմնական կենտրոնացած է Արարատյան ջրավազանային կառավարման տարածքում (ՋԿՏ): Արարատյան ՋԿՏ-ն կազմված է երեք գետավազաններից՝ Ազատ, Վեդի և Արփա: Արարատյան ՋԿՏ-ի գետերում ջրի քանակն ու որակն ընդհանուր առմամբ վատթարանում է, իսկ բնական էկոհամակարգերը դեգրադացվել են ստորջրային ջրերի անկայուն օգտագործման և ենթակառուցվածքների զարգացման, ինչպես նաև կլիմայի փոփոխության ազդեցությունների պատճառով: Ներկայումս մշակման փուլում է Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի ջրավազանային կառավարման պլանը (ՋԿՊ) 2025-2030թթ համար, ինչը ՀՀ կառավարության պահանջ է և համապատասխանում է եվրոպական միության Ջրի շրջանակային դիրեկտիվին:

### Ի՞նչ է արվելու այս փորձնական ծրագրի շրջանակներում:

Այս ծրագիրը կինտեգրի Արարատյան ՋԿՊ-ում բնական էկոհամակարգերի դերը ստորերկրյա և մակերևութային ջրերի որակի և քանակի ապահովման հարցում՝ էական ռիսկերի աղբյուրներն ավելի լավ հասցեագրելու համար (այդպիսի ռիսկեր են հողերի փոխակերպումն ու դեգրադացումը և կլիմայի փոփոխությունը): Ծրագիրը նաև կարևորելու է ջրային անվտանգության բարելավման հնարավորությունները՝ ջրավազանում բնական կապիտալի կառավարման միջոցով: Այս տեղեկատվությունը ԱԶԲ-ն և ՇՄՆ-ն կօգտագործեն կարևոր էկոհամակարգերում ներդրումները թիրախավորելու նպատակով՝ մասնավորապես իրականացնելով ջրաղբյուրների մոտ գտնվող անտառածածկ տարածքների կամ ջրաձահձային տարածքների պահպանում կամ վերականգնում: Այս գործողությունները կարող է ապահովել ջրի պատշաճ որակը՝ բարելավելով էրոզիան նվազեցնող բնական համակարգերը, ֆիլտրելով աղտոտիչները և նպաստելով սակավաջուր սեզոնին հոսքի ապահովմանը՝ այս կերպ նպաստելով երկրի ջրային անվտանգությունը:

*Խնդրում ենք հաշվի առնել, որ սա խտրատիվ գործընթաց է, որի ընթացքում ծրագրի առանձնահատկությունները կարող են ենթարկվել փոփոխությունների:*

### Հիմնական քայլերը

Քարտեզագրել ներկայում և ապագայում բնության դերը ջրային պաշարների համալրման հարցում՝ «InVEST» սեզոնային ջրարտադրողականության (Seasonal Water Yield) մոդելը կիրառելով հանրապետության մասշտաբով և փոփոխվող կլիմայի պայմաններում:

Հանգամանորեն ուսումնասիրել սեզոնային ջրարտադրողականությունն Արարատյան ջրավազանային կառավարման տարածքում, այդ թվում՝ քարտեզագրել տարբեր ջրօգտագործողներին (շահառուներին)՝ Արարատյան ՋԿՊ-ի համար տեղեկատվություն ապահովելու նպատակով:

ԱԶԲ ներդրումներն ուղղել ջրի ավազանի կայուն զարգացմանը օգտվելով գիտության վրա հիմնված տեղեկություններից առ այն, թե որտեղ և ինչպես են բնական համակարգերը նպաստում ջրային անվտանգությանը:



Հիմնական համագործակցող կողմերը ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն




# Ազդեցության հասնելու ուղիները

## Արարատյան ջրավազանային կառավարման պլան

Քաղաքականության տեսակը կամ ֆինանսական մեխանիզմը, որին ծառայելու է ծրագիրը	Գետավազանային կառավարման պլաններ և ռազմավարական էկոլոգիական գնահատումներ
Պլանավորված մեթոդներ բնական կապիտալի գնահատման և հաշվառման (NCAA) մոտեցման համար	Բնական կապիտալի քարտեզագրում, կլիմայի փոփոխություն
Հիմնական հարցեր, որոնց պետք է անդրադառնալ	Քաղցրահամ ջրեր
Աշխարհագրական մասշտաբը	Զրիավաք ավազան (ավազանային կառավարման տարածք)
Գնահատման ենթակա էկոհամակարգերը	Զրարտադրողականություն, ստորերկրյա ջրերի ավազանի վերականգնում

# Ազդեցության հասնելու ուղիները



Ծրագրի վերաբերյալ հարցերի դեպքում խնդրում ենք գրել [naturalcapitalproject@stanford.edu](mailto:naturalcapitalproject@stanford.edu) էլ. հասցեին: Լրացուցիչ տեղեկությունները տես «Մարդիկ, մոլորակ, բարեկեցություն» կայքում. [bit.ly/peopleplanetprosperity](http://bit.ly/peopleplanetprosperity):



Հիմնական համագործակցող կողմերը  
ՀՀ Նրջակա միջավայրի նախարարություն